ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2015 թվականի N 37-Ա

<<ԲՈՆԱԿՈԹԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N41- Ա որոշման 1-ին կետի, ***որոշում եմ***՝

1. <<Բոնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 2,670,000 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 1,112000 Հայաստանի Հանրապետության դրամով՝ հասարակ (սովորական) բաժնետոմսի քանակի պակասեցմամբ: Արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը կկազմի 1,558000 ՀՀ դրամ, որը կազմում է 1558 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի հունիսի 7-ի <<Բոնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին>> N120-Ա որոշմամբ հաստատված <<Բոնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2. կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3 .Հանձնարարել <<Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մարտի 24
ք. Կապան

Հաստատված է
թերթից Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2015թվականի
մարտի 24-ի թիվ. 37- Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Ս.Խաչատրյան

Կազմված է 24.03.2015թ. բաղկացած է 1
ՕՐԻՆԱԿ - -
ԳՐԱՆՑՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 31.07.2007թ..
Գրանցման թիվ- 222.120.00766
Վկայական 03 Ա 076976
ՀՎՀՀ 09810225
31.07.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
« » ---------- 2015թ

«ԲՌՆԱԿՈԹԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ » ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

1. «Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,558000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 1558 հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 31.07.2007թ գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը: